

2(075)

4-44

1898,

282

2010

2001

2(075)

(2-44) 48

ԿՐՈՆԻ ԳԱՍՏԱԳԻՐՔ

ԵՐՐԱՐԴ ՏԱՐՈՒԱՅ ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

(Համաձայն Ա.մենայն Հայոց ՎէճչԱ.ՓԱ.Ա. ԿԱ.ԹՈՒՂ.ԴԻԿՈՍԻՑ
Կաստառուած ծրագրի)

ԵՐԿՐՈՐԴ ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՄԻՐԵՑ

ԳԻՒՏ ՔԱՂԱԿԱՆԱՅԻ ԱՂԱՆԵԱՆՑ

$$\frac{400}{35 \cdot 321}$$

62164-*m*²



SΦPΦU

Տպարան Մակուհուի վարդանեանց

1888

ԳՐԱԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐԱ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐԱ
ՎԱՐԱՐԱ

ԳՐԱԴՐԱՄԱԿԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ

(Վարարա Վարարա Վարարա)

Դօշ. Կենցուրոյ, Թիֆլիս 17 Մարտ 1888 թ.

Տիպոգրաֆիա Մ. Վարդանյանց. Տրոյց. թիվ 11



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ ՎԱՐԱՐԱ

Վարարա

ՀՐԱՄԱՆԻ

S. S. ՄԱԿԱՐԱՅ Ա.

ՎԵՀԱՓՈԽ ԵԲ ՄՐԲԱՋՆԱԳՈՅՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՅԱՆԿ

ՄԱՍՆ Ա.

ԱՂՕՔ ՔՆԵՐ

- ա. Քեզ երկիրպագանելով.
- բ. Հայր գմթած.
- գ. Հրեշտակի խաղաղովեան.
- դ. Ընկալ Տէր զաղացանս մեր.
- ե. Փառք ՚ի բարձունս Աստուծոյ.
- զ. Հաւատամբ:

ՄԱՍՆ Բ.

ՏՈՒԵՐ

- է. Գրիստոսի պայծառակերպովիմբ:
- ը. Վերափոխումն ս. Աստուածածնի.
- թ. Ս. Թագէոս եւ Բարդուղիմէոս.
- ժ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ.
- ժա. Հոխիսիմեան եւ Գայիանեան սուրբ Կոյսեր.
- ժբ. Տօն սրբոյ Էջմիածնի.
- ժգ. Տօն Վարագայ սրբոյ խաչի.
- ժդ. Երեւումն սուրբ խաչի.
- ժե. Մեծն Ներսէս.
- ժզ. Ս. Սահակ եւ Մեսրովայ թարգմանիչներ.
- ժէ. Ս. Ասովմեանք.
- ժը. Ս. Վարդանանիք.

ՄԱՍՆ Ը.

Ա Զ Ո Թ Ք Ն Ե Բ

Ա.

ԵՐԵԿՈՅԵԱՆ Ա.Ղ.ՕԹ.Ք.

Քեզ երկիրակադանելով Տէր Աստուած
մեր՝ գոհանամբ զքէն յաղագս խաղաղու-
թեամբ անցուցանելոյ ՚ի մէնջ զերկարու-
թիւն առւնջեանս:

Տուր մեզ Տէր, աղաչեմբ զքեզ՝ զերեկս
և զառաջիկայ զիշերս առանց մեղաց, և
առանց գայթակղութեան անցուցանել Հաս-
տատուն կալ և մնալ ՚ի Հաւաս՝ ՚ի Յոյս
՚ի Սէր՝ և ՚ի պատուիրանապահութեան քոյ:

Խողրելով զխաղաղութիւն ամենայն աշ-
խարհի, և Եկեղեցւոյ քում սրբոյ զհաստա-
տութիւն, և անձանց մերոց զփրկութիւն:
Որպէս զի ընդունելով ՚ի քէն զհայցուածա-

մեր՝ և զմեծ վայելչական փառաբանութիւն
միշտ՝ ՚ի բարձունս առաքեսցուք ամենազօր
տէրութեանդ. Քրիստոս Աստուած մեր.
այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից.
ամեն:

Բ.

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԱՂՅԹՔ

Հայր գթած, բարեխնամող, արարիչ
ամենայն արարածոց, ընկալ զպաղատանս
ծառայից քոց ՚ի ժամերեկոյիս. որ առատղես
առ ամենեսեան պարզեօք բարերարու-
թեան քո:

Ողորմեա, Տէր, ամենայն աշխարհի, և
Եկեղեցւոյ քում սրբոյ. հիւանդաց, վշտացե-
լոց, ճանապարհորդաց, նաւորդաց, խոստո-
վանողաց, ապաշխարողաց և հոգւոցն հան-
գուցելոց:

Զի գու, Տէր ամենակալ, զիտես զպէտո
մեր և զկարիս՝ առաւել քան զոր ինդրեմք
և իմանամք և քեզ ընդ Որդւոյ և Ամենա-
սրբոյ Հոգւոյդ, վայել է փառք, իշխանու-

թիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւի-
տեանս յաւիտենից. ամեն.

Գ.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՂՅԹՔ.

Հրեշտակի խաղաղութեան յանձն արա
զանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ
պահեսցէ զմեզ անխոռովս ՚ի տուէ և ՚ի զիշ-
շերի, յարթնութեան և ՚ի հանգստեան մե-
րում. զի դու ես արարիչ լուսոյ և հաստիչ
գիշերի:

Եւ այժմ աղաչեմք զըեզ, Տէր Աստուած
մեր, զհանգիստ զիշերիս շնորհեա խաղա-
ղութեամբ անցուցանել, և հասանիլ ՚ի պաշ-
տօն առաւոտու՝ յերկրպագութիւն և ՚ի փա-
ռաբանութիւն Ամենասուրբ երրորդու-
թեանդ, այժմ և միշտ և յաւիտեանս:

Գ.

ԱՂՅԹՔ ԱՌ ՀԱՅՐՆ ԱՍՏՈՒԱԾ

Ընկալ, Տէր, զաղաշանս մեր՝ բարե-
խօսութեամբ սուրբ Աստուածածնին անա-

րատ ծնողի միածնի Որդւոյ քո. և աղա-
չանօք ամենայն սրբոց քոց. և որոց այսօր
է յիշատակ:

Հուր մեզ, Տէր, և ողորմեա, ներեա,
քաւեա և թող զմելս մեր: Արժանաւորեա
գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Որդւոյ
և ընդ սրբոյ Հոգւոյդ. այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ե.

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀՐԵՇՑԱԿՈՅ.

Փառք 'ի բարձունս Աստուծոյ. և յեր-
կիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն:
Եւ օրհնութիւն քեզ 'ի բարձունս, օրհնեալ
ես Տէր Աստուած մեր. օրհնեմք զքեզ և
գովեմք զքեզ: Խոստովանիմք Տէր զքեզ և
երկիրպագանեմք քեզ. փառաւորեմք զքեզ.
գոհանամք Տէր զքէն փան մեծի փառաց
քոց: Տէր թագաւոր սուրբդ երկնային, Աս-
տուած և Հայր ամենակալ: Տէր և Որդի
Հօր միածին Յիսուս Քրիստոս և սուրբ
Որդի: Տէր Աստուած Գառն Աստուծոյ և

Որդի Հօր. որ առեր զմելս 'ի կուսէն: Ողոր-
մեցար, բարձեր զմեղս աշխարհի. և արդ
ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ նստիս ընդ
աջմէ Հօր ողորմեաց մեզ: Զի դու միայն
սուրբ, դու միայն բարձրեալ ես, դու միայն
Տէր մեր Յիսուս Քրիստոս: Տէր և Հոգիդ
Սուրբ՝ որ 'ի փառս Աստուած ընդ Հօր. ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ, Տէր
և գովեմք զԱնուն սուրբ քո յաւիտեան և
յաւիտեանս յաւիտենից: Արժանի արա,
Տէր, զօրս զայս խաղաղութեամբ, և ա-
ռանց մեղաց պահեա զմեզ: Օրհնեալ ես
Տէր Աստուած հարցն մերոց. գովեալ և
փառաւորեալ է Անուն սուրբ քո յաւի-
տեանս. ամէն: Օրհնեալ Տէր, ուսո՞ ինձ
զարդարութիւնս քո. (Երեք անգամ կրկ-
նիր): Տէր, ապաւէն եղեր մեր յազգէ յազգ:
Ես աղաչեմ Տէր, ողորմեա ինձ և բժշկեա
զանձն իմ: Ես մեղայ քեզ: Յոյց մեզ Տէր
զողորմութիւնս քո, և զփրկութիւնս քո Տուր
մեզ: Տէր ողորմութիւն քո յաւիտեան. զգործս
ձեռաց քոց մի անտես առներ: Տէր իմ զքեզ

ապաւէն ինձ արարի. ուսո՞ ինձ առնել զկամն քո՞ զի դու ես Աստուած իմ: 'Ի քէն է, Տէր, աղբիւր կենդանութեան. և լուսով երեսաց քոց տեսանեմք զլոյս: Ծագեա զողորմութիւնս քո՞ որք ճանաչեն զքեզ, Տէր:

Փառք, պատիւ և երկրպագութիւն 'ի բարձունս Հօր և Որդոյ և Հոգույն Սրբոյ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զ.

ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ.

ա. Հաւատամք 'ի մի աստուած, 'ի Հայրն առենակալ, յարարիչն երկնի և երկրի, երևելիաց և աներևութից:

բ. Եւ 'ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր: Աստուած յԱստուծոյ, լոյս 'ի լուսոյ, Աստուած Ճմարիտ յԱստուծոյ Ճմարտէ՝ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկնս և 'ի վերայ երկրի երևելիք և աներևոյթք:

գ. Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովին սրբով: Որով էաւ զմարմին, զհոգի և զմիտ, և զամենայն որ ինչ է 'ի մարդ, Ճմարտապէս և ոչ կարծեօք:

դ. Զարչարեալ, խաչեալ, թաղեալ:

ե. Յերրորդ աւուր յարուցեալ:

զ. Ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն նատաւ ընդ աջմէ Հօր:

է. Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

ը. Հաւատամք և ի սուրբ Հոգին յանեղըն և 'ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարդարէս և յԱւետարանս: Որ էջն 'ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն, և բնակեցաւ 'ի սուրբսն:

թ. Հաւատամք և 'ի միմիայն ընդհանրական և առաքելական եկեղեցի:

Ժ. Ի մի մկրտութիւն, յապաշտարութիւն:

Ժա. 'Ի քաւութիւն և 'ի թողութիւն
մեղաց: 'Ի յարութիւն մեռելոց:

Ժբ. 'Ի դատաստանն յաւիտենից՝ հոգւոց
և մարմնոց, յարքայութիւնն երկնից և
'ի կեանսն յաւիտենական:

Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յորժամ ոչ
էր Որդի, կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սուրբ
Հոգի, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայլմէ
էութենէ ասեն լինիլ զՈրդին Աստուծոյ և
կամ զՍուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են
կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթու-
ղիկէ և առարելական սուրբ Եկեղեցի:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԴՈՐՉԻ Ա.Ս.Ծ.

Իսկ մեք փառաւորեացուք որ յառաջ քան
զյաւիտեանա. Երկիրպագանելով Սրբոյ Եր-
րորդութեան և միոյ աստուածութեանն
Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՄԱՍՆ Բ.

S O N E P

Է.


ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌՈՒԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
ՎԱՐԴԱՎԱՎԱՌ:

(Մատթ. Փէ. 1—8).

1. Մի անգամ Յիսուս իւր Պետրոս, Յակովը և
Յովհաննէս առաքեալներին տարաւ Թափօր լեառը և
սկսաւ աղօթք անել այնտեղ. աղօթելու ժամանակ Յի-
սուսի երեսը փալլեցաւ արեգակի պէս և շորերը սպի-
տակացան ինչպէս ձիւն: Երկու մարդ սկսան խօսել Յի-
սուսի հետ. դոքա Մովսէս և Եղիա մարգարէներն էին:

Աշակերտները երբ Աստուածային ալդ փառքը տե-
սան՝ հիացան և Պետրոսն տսաց Յիսուսին. «Տէր, լաւ
կը լինի որ այստեղ մնանք, երեք վրան (տաղաւար) շե-
նենք, մէկը Քեզ, մէկը Մովսէսի և մէկն էլ Եղիայի
համար». նա չը գիտէր, թէ ինչ էր խօսում, որովհետեւ
վախեցած էին:

Այդ միջոցին մի լուսաւոր ամպ իջաւ և ծածկեց
նոցա: Երկնքից ձայն եկաւ թէ «Դա է իմ սիրելի՝ Որդին,
Որին հաւանեցի, Դորան լսեցէք»: Աշակերտները ահից



թափուեցան գետին: Իսկ Յիսուս մօտենալով նոցա՝ քա-
ջալերեց և ոտքի կանգնեցրեց. Երբ նոքա վերկացան՝
Յիսուսին իւր առաջուալ կերպարանքովը տեսան:

2. Վարդավառի տօնը Հայերը քրիստոնէութիւնից

առաջ կատարում էին Նաւասարդ ամսի սկզբում, Հռով-
մայեցւոց Օգոստոսի 11-ին, որ է մեր տարեգլուխը կամ
Նոր տարին, և ամեն տարեգարձին, որպէս նոյի՝ ջրհե-
ղեղից ազատուելու յիշատակ տօն էին կատարում աղօթք
մատուցանելով ճշմարիտ Աստծուն և Աստուածպաշ-
տութեան տեղը զարդարում էին վարդերով, որից այդ
տօնը ստացաւ Վարդավառ անունը. այդ տօնին մի-
մեանց վերայ ջուր էին ցանում իրեն յիշատակ ջրհե-
ղեղի և թռցնում էին աղաւնիներ, նոյի աղաւնի թռցնե-
լուն յիշատակ:

35-ը

Երբ Հայաստանում կռապաշտութիւնը տարածու-
ցաւ, Նաւասարդի տօնի հանդէսը մատուցանում էին Աստ-
ղիկ և Անահիտ կուռքերին և Վահեվանեան մեհեանին,
որ գտնվում էր Արտաշատում և Տարօն գաւառում: Իսկ
ետոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը այդ հեթանոսական
տօնի փոխանակ կարգեց Քրիստոսի պայծառակերպու-
թեան տօնը և ջուր ցանելու, աղաւնի թռցնելու ու
վարդ փռելու սովորութիւնը մնաց մինչև այսօր:

Քրիստոսի պայծառակերպութեան տօնին եկեղեցում
ասւում է այս ժամանակը.

Երեխ Տէրդ այսօր տշակերտացդ ՚ի
Թափորական լերինն, և աշակերտացըդ
զարչուրեալը ազաղակէին ասելով. ա-
րասցուք Երիս տաղաւարա՝ մի Տեառնդ,
և մի Մովսիսի և մի Եղիայի: Արդ՝ և
մէք բանաւոր հօտքս Երգեմը ընդ քո

Ճշմարիտ վկայիցդ. առաքեա առ մեզ
զլոյս քո շնորհացդ ի բո միւսանգամ
գալստեանդ և կեցու:

Ա.

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

Յիսուս Քրիստոս երբ Խաչի վերայ էր՝ իւր մօրը
յանձնեց իւր սիրելի աշակերտ Յովհաննէս աւետարանչին,
որի մօտ սուրբ կոյս Մարիամը կացաւ մօտ տասն և
չորս տարի և երբ տեսաւ, որ իւր մահը մօտեցել է՝ ա-
ռաքեալներին և հաւատացեալներին օրհնեց և աւանդեց
հոգին: Առաքեալները վերցրին Աստուածամօր մարմինը
և մեծ հանդիսով տարան թաղեցին Գեթսեմանի գիւ-
ղումը:

Ս. Բարդուղիմէոս առաքեալը ներկայ չէր թաղմա-
նը. երբ եկաւ՝ տեսաւ որ Ս. Կոյսը այլ ևս կհնդանի
չէ, խիստ փափագեցաւ տեսնել նորա մարմինը. այդ
պատճառով առաքեալների հետ գնաց Գեթսեմանի և
երբ բացին տապանը՝ ս. Կուսի մարմինը չը գտան նորա
մէջ և հաւատացին, որ ս. մարմինը հրեշտակների
օրհներգութեամբ համբարձել—վերափոխուել էր երկինքը
իւր Մ'իածին Որդու մօտ:

Բարդուղիմէոսը սաստիկ տիրեցաւ, որ ս. Կուսին
ոչ կենդանի կարողացաւ տեսնել, և ոչ գոյնէ նորա սուրբ
մարմինը տեսաւ տապանի մէջ. առաքեալները տեսնելով
նորա այս տիրութիւնը՝ ընծալեցին նորան ս. Կուսի

պատկերը, որ Յովհաննէս Աւետարանիչը նկարել էր
կիպարիս փայտի վերայ և սուրբ Աստուածածինը իւր
սուրբ երեսի վերայ դնելով՝ խնդրել էր Աստծուց նորա-
նով բժշկութեան շնորհ այն միջոցին խիստ տարածուած
բորոտութեան ցաւին:

Բարդուղիմէոս չափազանց ուրախանալով՝ առաւ ս.
պատկերը, շտապեց Հայաստան և Տիգրիս գետի ափին
Կանգուար բերդի մօտ մի տաճար շինեց սուրբ Աստուա-
ծածնի անունով, ուր պահեց տիրամօր պատկերը. այնտեղ
հաւաքեց կոյսեր, որոնց վերայ մայրապետ կարգեց Մա-
րիամ անունով մէկին, իւր աշակերտներից մէկին էլ նո-
ցա համար քահանայ ձեռնադրեց և այդ տեղը անուա-
նեց Հոգեաց վանք:

Ս. Աստուածածնի վերափոխման տօնը Հայոց եկե-
ղեցին կատարում է ամառը, Օգոստոս ամսին. այդ օրը
եկեղեցօսմ ս. Պատարագից յետոյ խաղողի օրհնութիւն
է լինում:

Թ.

Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒԱԾՈՒՄԵՈՍ.

1. Հայոց Ս. բ գ ա լ թագաւորը լսեց, թէ Երու-
սաղէմի մէջ քարոզում է մեր Տէր Յիսուս Քրիստոսը և
բժշկում է բորոտներ, կաղեր, կոյլեր և ամեն տեսակ
հիւանդներ. Եւ որովհետեւ ինքն էլ հիւանդ էր՝ դես-

սպանների ձեռքով մի նամակ ուղարկեց Փրկչին, որի մէջ գրում էր, թէ՝ լըսել եմ որ Դու առանց դեղի բժշկում ես տեսակ տեսակ հիւանդներ և յարութիւն ես տալիս մեռելներին. ուրեմն կամ Աստուած ես Դու և կամ Աստուծոյ Որդի. ուստի խնդրում եմ գաս ինձ մօտ և բժշկես իմ հիւանդութիւնը. այլ և լսել եմ, թէ Հրեաները ուզում են քեզ չարչարել. ես մի փոքրիկ քաղաք ունիմ, որ երկուսիս էլ բաւական է:

Աբգարը գեսպանների հետ դրեց և մի նկարիչ և պատուիրեց նորան, որ եթէ Յիսուս չը համաձայնի գալ՝ նկարէ նորա պատկերը և բերէ:

Դեսպանները հասան Երուսաղէմ այն օրը, երբ Յիսուս փառքով Երուսաղէմ էր մտնում. նոքա առաքեալների ձեռքով Աբգարի նամակը տուին Փրկչին: Յիսուս յանձնեց Թովմաս առաքեալին պատասխան դրել Աբգարին, որ ինքը Իւր համբարձումից յետով կուղարկի Իւր աշակերտներից մէկին, որ կը բժշկէ Աբգարի հիւանդութիւնը:

Երբ Աբգարի ուղարկած նկարիչը տեսաւ, որ Յիսուս չի համաձայնում գնալ, սկսեց նկարել Փրկչի պատկերը, բայց չը կարողացաւ. Յիսուս կանչեց նորան Իւր մօտ, պահանջեց մի մաքուր կտաւ և դնելով Իւր դէմքի վերայ՝ դրոշմեց նորա վերայ Իւր Աստուածային պատկերը և գեսպանների ձեռքով ուղարկեց Աբգարին: Այս պատկերը կոչվում է Դաստառակ Քրիստոսի:

Քրիստոսի համբարձումից յետով Հայաստան եկաւ Թագէսս առաքեալը, որ Նորա եօթանասուն և երկու աշակերտներից մէկն էր, և բերեց իւր հետ Փրկչի կողամուխ Գեղարդը, որ ալժմ դժոնվում է սուրբ Էջմիածնալ

տաճարում: Նա գալով Եղեսիա քաղաքը՝ բժշկեց Աբգար թագաւորին, մկրտեց նորան, նորա բոլոր տունը և Եղեսիալի բնակիչներին, քանդեց բոլոր կռատունները և ամեն տեղ կանգնեցրեց Քրիստոսի սուրբ Խաչը. Եկեղեցիներ



շինեց, քահանաներ կարգեց և իւր տեղ ձեռնադրելով թագաւորի խոլը (թագ) շինող Ադրէին եպիսկոպոս՝ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը աւետարանը քարոզելու: Աբգարի հրամանով գնաց նորա քրոջ որդի Աանատրուկ իշխանի մօտ, քարոզեց այնտեղ և Աանատրուկին իւր Աանդուխտ աղջկայ հետ դարձրեց քրիստոնեալ. այնտեղից էլ գնաց Հայաստանի ուրիշ կողմերը և քարոզում էր. բայց վերջը Աանատրուկը ուրանալով քրիստոնէու-

թիւնը՝ նահատակեց Թաղէոս առաքեալին և նորա հետ
իւր աղջիկ Սանդուխտ կոլոին:

2. Թաղէոս առաքեալից յետոյ Քրիստոսից 65 տարի
յետոյ Հայաստան եկաւ ս. Բարդուղիմէ ոս առա-
քեալը, որ իւր հետ բերելով ս. կոյս Մարիամի պատկերը՝
Տիգրիս գետի ափին մի փոքրիկ եկեղեցի շինեց սուրբ
Աստուածածին անունով և պատկերը դրաւ այնտեղ: Նա
Հայաստանում քարոզեց, շատերին քրիստոնեալ դարձրեց
և երկու տարի շարունակ Հայաստանում քարոզելուց յե-
տոյ՝ նահատակուեցաւ Սանատրուկից:

3. Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալները կոչվում
են Հայաստանի առաջին Լուսաւորի չներ,
որովհետեւ Հայաստանում առաջին անգամ նոքա տա-
րածեցին քրիստոնէութիւնը. իսկ Հայոց եկեղեցին կոչ-
վում է առաջին քրիստոնէական եկեղեցի. ո-
րովհետեւ ամեն ազգերից առաջ ընդունեց քրիստոնէու-
թիւնը և ունի շարունակ առաքելական յաջորդութիւն
սկսած ս. Թաղէոս և Բարդուղիմէոսից:

Մեր եկեղեցին հանդիսաւոր կերպով տօնում է այդ
երկու Լուսաւորիչների տօնը ամեն տարի:

Ժ.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈԽՎԱՒՈՐԻ Զ.

1. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ չը Անակ Կա-
խարարի որդին էր. նա ծնուեցաւ 257 թուին Վաղարշա-
պատ քաղաքում:

Պարսից Արտաշիր թագաւորը մի քանի անգամ յաղ-
թուած լինելով մեր Խոսրով թագաւորից՝ աշխատում էր
միջոցներ գտնել ազատուելու նորանից. և ահա գտնու-
եցաւ Անակ անունով մէկ նախարար, որ յանձն առա-
խարդախ միջոցներով գլուխ բերելու Արտաշիրի ցանկու-
թիւնը. նա առնելով իւր ընտանիքը Պարսկաստանից
ինչպէս փախստական եկաւ Հայաստան և ապաւինեց
Խոսրովի պաշտպանութեան: Երեք տարի նա վայելում
էր Խոսրովի սէրը:

Մի անգամ արքունի որսի ժամանակ յարմար համա-
րելով Անակը սպանեց թագաւորին և փախչելիս իւղղուե-
ցաւ Երասխ գետի մէջ: Խոսրովը վերջին շնչին պատուիրեց
Անակի ընտանիքը ջնջել, որոնցից ազատուեցան երկու
որդիք՝ Սուրեն և Գրիգոր, առաջինին փախցրին Պարսկա-
ստան, իսկ փոքր որդուն նորա գայեակ Սօֆիան տարաւ
կեսարիա, որ այժմ կոչվում է Ղալսերի քաղաք և
գտնվում է Տաճկաստանում. և որովհետեւ ինքը Սօփիան
քրիստոնեայ էր, այստեղ մկրտեց նորան և անունը դրեց
Գրիգոր: Սա Կեսարիայում ստացաւ քրիստոնէական
կըթութիւն. ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ
հետ և ունեցաւ երկու որդի՝ Վրդանէս և Արիստակէս:

Երեք տարուց յետոյ Մարիամը իւր փոքր որդու հետ մտաւ կուսանոց, իսկ Գրիգորը Վրդանէսին յանձնելով դայեկին՝ ինքը գնաց Հռովմ, որ Խոսրովի որդի Տրդատի մօտ ծառայութեամբ քաւէ իւր հօր մեղքը:

Մի քանի տարուց յետոյ Տրդատը իւր քաջութիւնների համար թագաւորական թագ ստանալով՝ յետ դարձաւ Հայաստան հայրական աթոռը ժառանգելու: Ճանապարհին երբ հասան Եկեղեց գաւառի Երիզայ գիւղը՝ Տրդատը շնորհակալութեան զոհ բերեց Անահիտ կուռքին և Գրիգորին էլ հրամայեց, որ ծաղկեալ պսակ դնէ նորա արձանին. իսկ Գրիգորը, որ մինչեւ այդ ժամանակ ծածուկ էր պահել իւր քրիստոնեալ լինելը ալժմ լաւանելով՝ բացարձակ հրաժարուեցաւ թագաւորի հրամանը կատարելուց: Այդ պատճառով թագաւորը հրամայեց տասներկու տեսակ խիստ չարչարանքներ տալ նորան, և այդ բոլորը համբերութեամբ տարաւ Գրիգորը: Իսկ երբ իմացաւ Տրդատը, թէ Գրիգորը իւր հօր սպանող Անակի որդին է՝ հրամայեց ձգել Արտաշատ քաղաքի գուբը (Խորվիրապ), ուր ձգում էին մահապարտներին: Այդ գուբի մէջ Գրիգորը մնաց մօտ 15 տարի, կերակրուելով մի պառաւ կնոջ ձեռքով ըստ աւանդութեան:

2. 301 թուին Հռովմից փախան Հայաստան Հռիփսիմեան կոյսերը, որոնց Տրդատը նահատակել տուեց, գորա համար իւր չարագործութեան պատիժը ստացաւ. խիզճը ոկսաւ տանջել նորան և ընկաւ թափառելու անմարդաբնակ տեղերը, ուր խոզերն էին ապրում:

Տրդատի քոյլը Խոսրովիդիսին քանիցս կը կնուած երազում յատնուեցաւ, թէ Գրիգորը կենդանի է Խորվիրապի մէջ և թէ միայն նա կարող է բժշկել Տրդա-



տին և ժողովրդին: Իսկոյն Օտար անունով նախարարին ուղարկեցին Խորվիրապ և զբից հանեցին ս. Գրիգորին, որ եկաւ Վաղարշապատ, ս. Կոլսերի մարմինները թաղեց և իւր 65 օրուաւ քարոզութեան ընթացքում հետզհետէ բժշկեց Տրդատին և բոլոր ժողովրդին:

Յետոյ Տրդատը հաւաքելով բոլոր մեծամեծներին և ժողովրդեան՝ ընդհանուր խորհրդով ընտրեցին ս. Գրիգորին Հայաստանի հովիւ և ուղարկեցին Կեսարիա ս. Թագէոսի յաջորդ Ղեռնդիոս պատրիարքի մօտ, որից ձեռնադրուեցաւ Հայրապետ ամենայն Հայոց, Փրկչի 302 թուին։ Ղեռնդիոս պատրիարքը ընծայեց նորան Յովհաննէս Կարապետի և Աթանագինէ եպիսկոպոսի մասունքները. Երբ ս. Գրիգորը հասաւ Մուշ քաղաքը՝ այնտեղ մի եկեղեցի շինեց և Յովհաննէս Կարապետի մասունքի մի մասը դրեց այնտեղ, որ ասուեցաւ Սուրբ Կարապետի վանք։

Ս. Գրիգորը Կեսարիայից յետ դառնալիս ճանապարհին կուռքերի արձանները քանդեց, շատերին մկրտեց և քահանալիք ու եպիսկոպոս ձեռնադրելով՝ յանձնեց նոցա խնամքին հաւատացեալ ժողովուրդը։ Երբ հասաւ Վաղարշակերտ քաղաքը՝ ընդառաջել էր թագաւորը իւր պալատականներով, զօրքերով և ժողովրդով, որոնց Եփրատ գետի մէջ մկրտեց, փոխելով Տրդատի անունը Յովհաննէս։ Խոկ երբ Վաղարշապատ հասաւ՝ Տրդատի օգնութեամբ շենեց ս. Էջմիածնայ տաճարը, Հուիսիմեանց և Գալիսնեանց մատուռները, ձեռնադրեց քահանաներ և եպիսկոպոսներ, բաց արաւ ուսումնարաններ, տօներ սահմանեց և Տրդատի օգնութեամբ քրիստոնէութիւնը ծաղկեց ամեն տեղ։ Եւ այսպէս քրիստոնէական կրօնը Հայաստանում տարածելուց յետոյ սուրբ Գրիգորը 321 թուին առանձնացաւ Մանիայ ալրը, ուր և վախճանեցաւ, որի մաքմինը հովիւները գտնելով թաղեցին այնտեղ։ Երկար ժամանակ նորա մարմինը մնալով այնտեղ՝ վերջը Գառնիկ անունով մի ճգնաւոր գտաւ և թաղեց Թորդանում, իսկ

վերջը տարուեցաւ Վաղարշապատ և ամփոփուեցաւ յանուն ս. Գրիգորի կառուցած (Զուարթնոց) եկեղեցում։

Ա. Գրիգորը կոչվում է Հայաստանի երկրորդ Լուսաւորիչ, որովհետեւ ս. Թագէոս և Բարդուղիմէս նախկին Լուսաւորիչներից յետոյ սա նորոգեց քրիստոնէութիւնը Հայաստանում։

Ա. Գրիգոր Լուսաւորչի տօնը երեք անգամ ենք կտարում տարին։

ա. Մեծի պահոց հինգերորդ շաբաթ օրը կտարում ենք չարչարանքի և Խորվիրապը մտնելու տօնը։

բ. Հոգեգալստից յետոյ երկրորդ շաբաթ օրը տօնում ենք Խորվիրապից դուրս դալը։

գ. Երկու շաբաթ անց այդ տօնից տօնում ենք նորա սուրբ Նշանարները գտնելու տօնը։

ԺԱ.

ՀՐԻՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ՍՈՒՐԲ ԿՈՅԾԵՐ

Սուրբ Հռիփսիմէ կոյսը, որ թագաւորի տանից էր, իւր ուսումը ստացաւ Հռովմի մէկ կուսանոցում Գայիսանէ մայրապետի մօտ և յայտնի էր ամենքին իւր պարկեշտութեամբ, Աստուածալաշտութեամբ և գեղեցկութեամբ։

Հռովմայեցւոց Դիոկետիսանոս կայսը շաբաթնեց Հռիփսիմէին և մալրապետի միջոցով առաջարկեց նորան թագուհի լինել տէրութեան՝ իւր հետ ամսութ

նանալով։ Բայց Հռիփսիմէն կամենալով իւր ուխտին հաւատարիմ մնալ մերժեց կայսեր առաջարկութիւնը. և այս կոյսերը տեսնելով, որ ալնուհետեւ իրանց կեանքը վտանգի մէջ պէտք է լինի, Գալիխանէ մայրապետի առաջնորդութեամբ և մի քանի քահանաներով, որոնք մօտ եօթանասուն հոգի էին, գաղտնի փախան Հռովմից դէպի Երուսաղէմ. երկրպագեցին սուրբ տեղերին և ապա Հայաստանի զանազան կողմերը մանգալուց յետոյ վերջը իջևանեցին Վարագ սարի վերայ։ Այնտեղից սուրբ Հռիփսիմեանք երեսուն և եօթն հոգւով դնացին Վաղարշապատ քաղաքը և բնակեցան քաղաքից դուրս գտնուած մի հնձանի մէջ, ուր հուլունք պատրաստելով ապրում էին։

Երբ որ Դիոկղետիանոսը լսեց, թէ Հռիփսիմէն մայրապետի և ուրիշ շատ ընկերների հետ փախել է Հռովմից, իսկոյն ինդրակներ ուղարկեց ամեն կողմ որ գտնեն նորան։ Հրսվարտակ գրեց մեր թագաւոր Տրդատին, որի մէջ գրում էր թէ Հռիփսիմէին կամ ինքը կին վերցնէ և կամ ուղարկէ Հռովմ իւր մօտ։

Խսկոյն Տրդատ մարդիկ ուղարկեց որոնելու այդ կոյսերին, որոնք գտնուեցան հնձանի մէջ։ Տրդատը այնպէս հաւանեց Հռիփսիմէին, որ ցանկացաւ նորան Հայաստանի թագուհի գարձնել. բայց Հռիփսիմէն մերժեց Տրդատի առաջարկութիւնը, տմենեկին չվախենալով նորա սպառնալիքներից, որովհետեւ նտ ուխտել էր իւր կեանքը նուրիբել Աստծուն մինչև մահը։ Գալիխանէն էլ յորդում էր նորան ամենեկին չը փոխել իւր միտքը։ Տրդատը խիստ բարկացաւ Հռիփսիմէի և Գալիխանէի այս վարմունքի վերայ և հրամայեց նահատակել

նորան՝ բոլոր ընկերների հետ. դա չի ճները գնացին և տեղնուտեղը ամենքին էլ կատորեցին և թողին անթաղ, մինչև որ ս. Գրիգոր Լուսաւորիչը Խորվիրապից դուրս եկաւ և ամփոփեց նոցա մարմինները ու նոցա վերայ շինեց մատուռներ։

Սոքա կոչուեցան Հռիփսիմեանք և Գալիխանեանք իրանց գլխաւորների անունով, որոնց տօնը Եկեղեցին կատարում է ամեն տարի հանդիսով Հռովմալստեան երկրորդ շաբաթը ս. Լուսաւորչի տօնից առաջ։


ԺԲ.

ՏՕՆ ՄՐԲՈՅ ԷջՄԻԱԾՆԻ.

Երբ որ սուրբ Գրիգոր Լուսաւորչին Խորվիրապից հանեցին՝ Տրդատ թագաւորը, նախարարները և շատ ժողովուրդ հաւաքուեցան նորա չորս կողմը. ս. Գրիգորը վաթսուն և հինգ օր շարունակ հնձանում քարոզեց նոցա Քրիստոսի սուրբ Աւետարանը։ Նա տեսաւ մի լուսեղէն մարդ, որ իջաւ ներքեւ և որի հետ լոյսը վերևեց իջնում էր մինչև ներքեւ. այն մարդը ձեռքին բռնած ունէր մի մեծ ոսկէ մուրճ-ուռն. նա եկաւ հասաւ մինչև յերկիր և ոսկէ ուռով խփեց գետնին քաղաքի մէջ տեղում, այնպէս որ այդ ձայնի վերայ թնդաց անդունդքը։

Ահաւոր տեսքով մարդը, որ ոսկէ ուռով բաղխեց երկիրը՝ Հօր Աստուծոյ Միածին որդին էր, որ իջաւ երկնքից։ Այս տեսիլքը եղաւ 302 թուին։ Երբ ս. Գրիգորը Տրդատ թագաւորին և նախարարներին պատմե

այդ տեսիլը՝ իսկոյն նոցա և բոլոր ժողովրդի օգնութեամբ Միածնի իջած տեղը շինեց Մայր եկեղեցի, որին անուանեց Եջ-ՄիԱծն։



Սուրբ Եջմիածինը նշանաւոր է նորանով, որ ո. Լուսաւորիչը այնտեղ հաստատեց ամենայն Հայերի Հայրապետական Աթոռը, այնտեղ է օրհնվում սուրբ Միւռանը, և այնտեղ են ձեռնադրվում և օծում Հայոց ազգի կաթուղիկոսները և եպիսկոպոսները։

Այդ պատճառով ո. Եջմիածնալ տօնը մեծ հանդիսավոր տօնում է Հայաստանեալց եկեղեցին։ Ա. Եջմիածինը ամենայն Հայերի սիրան է, նրա հետ են կապուած բո-

լոր քրիստոնեալ Հայերը, ինչ երկրումն էլ որ բնակություն լինին, որովհետև մեր ո. Լուսաւորչի հիմնած առաջին եկեղեցին է և այնտեղից է տարածւում բոլոր Հայերի վերայ Քրիստոսի սուրբ հաւատի լոյսը։ Ա. Եջմիածնալ տօնը կատարւում է Հոգեգալուստի երկրորդ կիւրակէին։

ՃՊ.

ՏՕՆ ՎԱՐԱԴԱՅ ՍՐԲՈՅ ԽԱԶԻ։

Երբ որ առաջին դարում Պատրոնիկէ թագուհին գաաւ Քրիստոսի սուրբ Խաչափայտը՝ Յակովոս Տեառնեղբայրը նորանից մի կտոր տուաւ թագուհուն։ Եւ



որովհետև Հռիփսիմէ կոյսը նորա ցեղիցն էր՝ այս մասունքը անցած էր նորա ձեռք։ Երբ որ Հռիփսիմէն իւր ընկերներով Հռովմից փախաւ Հայաստան Խաչափայտի ալդ մտսն էլ հետն ունէր իբրև իրան պահապան։ Եւ

երբ նոքա հասան Վարագ սարը՝ Հռիփսիմէն վախենալով թէ մի գուցէ այդ Խաչը ընկնի անհաւատների ձեռքը և անարգուի, թաղեց Վարագ լերան գլխին 300 թուին, այնպէս որ տեղը ոչ ոք չէր իմանում, թէպէտ աւանդութեամբ յատնի էր, որ Կենաց Փայտի կտորը պահուած էր Վարագ լերան վերայ:

Նատ տարիներ անցնելուց յետոյ այդ լերան վերայ ճգնուում էր Թօդիկ անունով մի մարդ. մէկ օր (653 թուին) առաւօտեան Թօդիկը և իւր աշակերտ Յօվէլը յանկարծ տեսան մի լոյս կանգնած Վարագ սարի մէկ քարի վերայ և տասերկու լուսեղէն սիւներ նորա շուրջը. յետոյ լուսեղէն նշանը վերացաւ քարից և մտաւ եկեղեցի ու կանգնեց սեղանի վերայ. նոքա մտան եկեղեցին և երկրպագեցին սուրբ Նշանին: Լուսեղէն սիւները տասներկու օր մնացին, մինչև որ չեռաւոր բնակիչները տեսան և հոգևորական ու աշխարհական մեծ բազմութիւն ժողովուեցան այնտեղ, որոնց չետ և ներսէս Գ. Նինող կոչուած կաթուղիկոսը և Ոշտունեաց Վալդ նախարարը:

Կաթուղիկոսը՝ ի պատիւ նոր գտնուած սուրբ Խաչի սահմանեց Վարագա լ խաչի տօն կատարել հոկտեմբեր ամսին և մի շաբաթ պահք, որ կոչվում է Վանցոց-պահք:

ԺԴ.

ԵՐԵԿՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ.

351 թուին Մեծն Կոստանդիանոսի որդի Կոստանդ կայսեր թագաւորութեան օրերում մի անգամ մալիսի եօթներորդ օրը աւաւօտեան Քրիստոսի սուրբ Խաչը խաչաձե ճառագալթներով փալլեց օդի մէջ Դողգոթա սարի գլխին, այնպէս որ նորա լուսաւոր ճառագալթները արեգակի լուսը փակելով տարածւում էին մինչև Զիթենեաց սարը. այս երեսոյթը շարունակուեցաւ մի քանի ժամ և տեսանելի էր Երուսաղէմի բոլոր բնակիչներին: Քրիստոնէից բազմութիւնը փառք էր տալիս Աստծուն, որ այդ սքանչելիքը ցոյց տուեց անհաւատներին:

Հազարաւոր մարդիկ այս սքանչելիքը տեսնելուց յետոյ քրիստոնէութիւն ընդունեցին և մկրտուեցան Երուսաղէմի սուրբ Կիւրեղ հայրապետի ձեռքով. սա Կոստանդ կայսեր գլեց սուրբ Խաչի հրաշալի երեւումը և հրէաների ու Հեթանոսների մէջ սկսաւ քարոզել և շատերին նոցանից գարձրեց քրիստոնեայ:

Մեր ս. եկեղեցին մինչև այսօր էլ տօնում է ս. Խաչի երեւումը միշտ Յիսանց (Զատկից յետոյ) հինգերորդ կիւրակէին:

ԺԵ.

ՄԵԾՆ ՆԵՐՄԵՍ.

1. ՄԵԾ ՆԵՐՄԵՍ Հայրապետը սուրբ Գրիգոր Լուսառոքի թոռան թոռան էր. նորա հօր անունն էր Աթանազինէ: Ներմէսը իւր ուսումը ստացել էր Կեսարիայում և ծառայում էր Հայոց արքունիքում ինչպէս սենեկապետ և զինակիր թագաւորի և իւր քաղցր բարքով Թիրելի էր ամենին: Նա ամուսնանալով մի որդի ունեցաւ՝ Սահակ անունով:

Փառներսեհ կաթուղիկոսի մահից յետոյ Հայոց նախարարները և մեծամեծները բազմաթիւ ժողովրդեան հետ գնացին Արշակ թագաւորի մօտ և խորհուրդ անելով՝ ընտրեցին Ներմէսին ս. Լուսաւորչի Աթոռի գահակալ: Յէ թուին:

Ներմէսը բարեկարգեց Հայաստան աշխարհը ամենայն կողմից: Նա Արշակ թագաւորի հաւանութեամբ ազգային ժողով գումարեց Աշտիշատ քաղաքում և վերացրեց ալն ժամանակ եղած բոլոր անկարգութիւնները. Նա շինեց աղքատանոցներ և հիւանդանոցներ ամեն գաւառների մէջ և լնդհանուը վերատեսուչ կարգեց նոցա Համար իւր սարկաւագ Խաղին: Ամեն գիւղերում վանքեր և իջևաններ շինեց ճանապարհորդների և հիւրերի համար. ապաստանարաններ շինեց ծերերի և կարօտեանների համար. մենաստաններ և գպրոցներ շինեց ամեն տեղ, և յունարէն ու ասորերէն լեզուներով գիտութիւնը և Աստուածալաշտութիւնը տարածուեց ամեն կողմէ: Ներ-

մէսի շինած ալդպիսի բարեգործական շինութիւնների թիւը երկու հազարից աւելի էր:

Ներմէսը արգելեց հեթանոսական սովորութիւնները, ինչպէս օրինակ՝ մեռելների վերալ անլուս լաց լինելը, սկեր հագնելը և ալլն:

Ներմէսը ման էր գալիս գիւղեր ու քաղաքներ և ամեն տեղ հաւասար կերպով տարածում էր իւր ինամքը. ամեն օր իւր հետ սեղան էր նստեցնում ոչ թէ միայն նախարարներին ու մեծամեծներին, այլ մանաւանդ աղքատներ, օտարականներ, կաղեր, կոյրեր ու հիւանդներ, որոնց վերքերը շատ անգամ ինքն էր լուանում ու գեղ դնում:

Թագաւորը, նախարարները և եպիսկոպոսները տեսնելով մեծն Ներմէսի ալդպիսի երկելի գործերը՝ ժողով կազմեցին Վաղարշապատ քաղաքում և պատուեցին նորան Պատրիարք արք տիտղոսով և որոշեցին, որ Հայոց կաթողիկոսը այլ ևս Կեսարիա չը գնայ օծուելու, այլ օծուի իւր ազգի եպիսկոպոսներից ս. Էջմիածնումը, որպիսի կարգը տեսում է մինչև ալթօր:

2. Ներմէսը երբէսեց, թէ Թէոդոս զօրավարը գիմում է Հայաստանը աւերելու, գնաց նորա առաջ և նորա բարկութիւնը իջեցրեց. գնաց Կ. Պոլիս Վաղենահանոս կալսեր բարկութիւնը դադարեցրեց և Հայոց պատանդները ազատելով՝ մեծ պատուի յետ դարձաւ Հայաստան:

Ներմէսը լաւ հասկանալով ազգի միութեան կարեւորութիւնը՝ երբ տեսաւ որ Հայոց Արշակ թագաւորի

ու նախարարների մէջ երկպառակութիւն կար՝ լորդորեց նոցա, յանդիմանեց և նախարարներին հաշտեցրեց թագաւորի հետ:

Յետու Ներսէս երկրորդ անգամ գնաց Կ. Պօլիս Վաղէս կալսեր բարկութիւնը հանգստացնելու թագաւորի վերաբերութեամբ. և այդ ժամանակ նորանից աքսորուեցաւ մի անմարդաբնակ կղզի, որտեղից ազառուեցաւ Վաղէսի մահից յետոյ և ներկայ գտնուեցաւ Կ. Պօլիսի տիեզերական ժողովին և յետ դարձաւ Հայաստան, բերելով իւր հետ Արշակ թագաւորի որդի Պապին, որ պատանդ էր այնտեղ և թագաւորեցրեց Հայոց վերայ, որպէս զի Պարսից Շապուհ թագաւորի Հայաստանին բերած թշուառութիւնները վերացնէ: Պարսիկներին հաւածեց Հայաստանից. պատերազմի ժամանակ ինքը նպատ սարի գլխին կանգնած աղօթում էր և ալդպիսով յաղթուեցան պարսիկները:

Այսքան նշանաւոր գործեր կատարելուց յետու Ներսէսը թունաւորուեցաւ Պապ թագաւորից, որովհետեւ միշտ յանդիմանում էր նորան վատ ընթացքի պատճառով և թաղուեցաւ Թիլն աւանի մայր եկեղեցու մէջ:

ԺԶ.

Ա. ՍԱՀՈՒԿ ԵՒ ՄԵԾՐՈՎՎՊ ԹԱՐԴՄԱՆԻՉՆԵՐ.

1. Քրիստոնէութիւնը Հայաստանում տարածուելուց սկսած չորս հարիւր տարի շարունակ մեր եկեղեցիներում ժամասացութիւնը լինում էր ասորերէն ու յունարէն լեզուներով, որովհետեւ հայերը սեպհական տառեր չունեին, որ մեր լեզուով գրէին եկեղեցական գրքերը. այդ պատճառով եկեղեցու ժամերգութիւնը անհասկանալի էր հայ ժողովրդի մեծ մասին: Այս բանի վերայ շատ էին մտածում մեր ս. Ամահակ և Մեսրովպ հայրապետնելը:

Ա. Հայ թէ ովքեր էին գոքա և ինչպէս գտան Հայոց տառերը:

4. Մ ե ս ր ո վ պ ը, որ Մաշտոց էլ է կոչվում, Տարօն գաւառի Հացեկաց գիւղիցն էր. նորա հօր անունն էր Վարդան. նա մանկութեան հասակից սնուեցաւ բարեպաշտութեան մէջ և սովորեց յունարէն, ասորերէն և պարսկերէն լեզուները. և որովհետեւ. այդ լեզուների մէջ շատ վարժ էր՝ առաջ մեծ Ներսէս կաթուղիկոսի մօտ գրագրութիւն էր անում, իսկ նորա մահից յետոյ կարգուեցաւ. Հայոց թագաւորների դիւանադպիր:

Քիչ ժամանակից յետոյ Մեսրովպը թողեց աշխարհի մեծութիւններն ու փառքերը և քաշուեցաւ Գողթն գաւառի վանքերից մէկը և այնտեղ սկսեց սուրբ կեանք անցկացնել. նա շատ հետեւողներ էլ ունեցաւ և շատերը

աշակերտեցան նորան։ Մեսրովպը իւր քարոզութեան և ուսուցչութեան ժամանակ տեսնում էր, որ հայերէն տառեր չը լինելու պատճառով ժողովուրդը չէր հասկանում ասորոց և յունաց լեզուով ժամերգութիւնը, գորա համար էլ խիստ ցանկանում էր հայերէն տառեր հնարել։ Նա թողեց Գողթն գաւառը և եկաւ Վաղարշապատ, ուր իւր միտքը յալտնեց ո. Սահակ կաթուղիկոսին և շուտով Հայոց Վ.Ռ.ամշապուհ թագաւորի ներկայութեամբ մի ժողով կազմեցին, որտեղ երկար մտածեցին թէ ինչ ձեռվ կարելի էր օգնել այդ բանին։

Վ.ռամշապուհ թագաւորը յալտնեց դոցա, թէ Դանիէլ անունով մէկ Ասորի եպիսկոպոսի մօտ գտնվում են Հայ նշանագիրներ։ Այդ պատճառով թագաւորի կարգադրութեամբ ուղարկվում է Հաբէլ քահանան Վահրիմ իշխանի հետ Դանիէլի մօտ, ուր մի տարի մնալով Հաբէլը սովորում է այդ նշանագրերը և գալով Վաղարշապատ բաց են անում ուսուումնարան։ Հաւաքում են աշակերտներ և սկսում են սովորեցնել. բայց անյաջող. յետոյ Մեսրովպ անձամբ գնում է այնտեղ և նոյնը սովորում. վերագանալով ուսուցանում է, բայց դարձեալ անյաջող. այդ է լինում պատճառ, որ նա սկսում է ճանապարհորդել զանազան գիտնական մարդկանց մօտ տառեր գանելու գիտաւորութեամբ։ Նախ գնաց Եղեսիա Պղատոսի մօտ, որը խորհուրդ տուեց նորան դիմել Փիւնիկէ Եպիփանոսին և նորան վախճանած գտնելով՝ գնաց Մամոսատ Հռուփանոսի մօտ։

Վերջը Մեսրովպ մարդկալին հնարագիտութիւնից յուսը կտրած դիմեց աղօթքով Աստծուն. գտաւ տառերը,

գրի անցկացրեց և դիմեց Հռուփանոսին այդ տառերը ձեակերպելու համար, որ և յաջողեցաւ 406 թուին։

Մեսրովպը շտապեց Հայաստան, ուր թագաւորի հրամանով իսկոյն ժողովեց մանուկներ, գպրոցներ բաց արաւ և այսպիսով ուսումն ու գիտութիւնը հայերէն տառերով սկսաւ տարածուիլ Հայաստանի մէջ. թարգմանեց Աստուածաշառնչ Առաք Գիրքը, բարեկարգեց ծիսարանը, որ նորա անունով կոչուեցաւ Մաշոց։

Վրացիք և Աղուաններն էլ իմանալով այդ՝ խնդրեցին Մեսրովպին, որ իրանց համար էլ տառեր հնարէ. Մեսրովպը գնաց նոցա երկիրները և կատարեց նոցա ցանկութիւնը։

Ս. Մեսրովպ Սահակ կաթուղիկոսի մահուանից յետոյ նստաւ կաթուղիկոսական Աթոռը և վեց ամսից յետ վախճանեցաւ ու թաղուեցաւ Օշական գիւղում, որ Վաղարշապատից մէկ ժամուայ ճանապարհ հեռու է։ Ս. Մեսրովպի գերեզմանի վերայ յետոյ շինուեցաւ եկեղեցի։

2. Ս. Սահակ հայրապետը Մեծ Ներսիսի որդին էր. քաջ գիտէր յունաց, ասորուց և պարսից լեզուները, առաքինի ու ազգասէր անձն էր. նա ամուսնանալով՝ մի աղջիկ ունեցաւ Սահականոյշ անունով, որ Վարդան Մամիկոնեանի մալրն էր։

Ս. Սահակ իւր կնոջ մահից յետոյ ազգի հաւանութեամբ հայրապետական գահը բարձրացաւ. և այդ ժամանակ մեծ զործեր կատարեց. կարգ և կանոն հաստատեց, եկեղեցիները պայծառացրեց, շատ եկեղեցիներ և

վանքեր նորոգեց, նորոգեց ս. Հռիփսիմեանց վկայարանը:
Իսկ երբ ս. Մեսրոպալ յայտնեց նորան իւր խորհուրդը
հայերէն տառեր զանելու մասին, նա ամեն կերպով
օգնեց թէ տառերը գտնելու և թէ Սուրբ Գրքի թարգ-
մանութեան, իր Հայրապետական իրաւունքով բանալով
ուսումնարաններ Հայաստանի ամեն կողմերը:

Եւ այսպէս նա իւր ամբողջ կեանքը նուրիելով
ազգի յառաջադիմութեան ու խաղաղութեան և եկեղե-
ցու պայծառութեան գործին՝ ծերութեան հասակում
առանձնացաւ Բագրեանդ գաւառի Բլուր գիւղը, ուր
440 թուին վախճանեցաւ մօտ իննսուն տարեկան հա-
սակում:

Ս. Սահակի և Մեսրոպալի լիշտակը մինչև այսօր
մեծ հանդիսով տօնում է մեր եկեղեցին տօն Սր-
բոց թարգմանչաց անունով:

ԺԵ.

Ս. ԱՏՈՎՄԵԱՆՔ.

Պարսից Յազկերտ թագաւորը հալածում էր քրիս-
տոնեաներին. նա մոգերի ու մոգակեների խորհրդով
հրաման հանեց, որ իւր տէրութեան ամեն կողմերը
քրիստոնէութիւնը ոչնչացնեն և տարածեն իրանց կրօնը
— կրակապաշտութիւնը:

Այդ նախատեսկով հրաւիրեց ձօրայ դուռը Հայոց
զօրքը, որոնց առաջնորդներն էին Ատովմ Գնունի և
Մանաճիհը Ռշտունի նախարարները և խիստ հրամայեց

նոցա, որ կրակին երկրպագութիւն տան. այլ և անո-
ղորմ տանջանքներով սկսեցին նոցա չարչարել. բայց
նոքա լաւ համարեցին մեռնել Քրիստոսի անուան հա-
մար քան թէ իրանց կրօնը թողնել. այդ պատճառով
փախան Հայաստան:

Երբ որ Յազկերտը իմացաւ ալդ՝ մեծ զօրք ուղար-
կեց նոցա ետևից և պատուիրեց որ եթէ յետ չը դառ-
նան փախստականները՝ սպանեն նոցա: Ատովմ և Մա-
նաճիհը նախարարները Անձեւացեաց գաւառի լեռների
մէջ ամրացել էին. Պարսից զօրքը այնտեղ վրայ հասնե-
լով նոցա բռնեցին և տեղն ու տեղը նահատակեցին:

Դոքա կոչուեցան և տովմեան ք, որոնց լիշտ-
տակը մեր սուրբ եկեղեցին կատարում է բուն բարե-
կենդանից երկու շաբաթ առաջ:

ԺԵ.

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ.

1. Սուրբ Վարդան Մամիկոնեանը Սահակ
Պարթևի թոռն էր, Վարդանը Յունաց Թէոդոս կայսրից
ստրատելատութեան պատիւ ստացաւ և պարսիկ-
ներից էլ մեծ պարզեներ ընդունեց իւր քաջութիւննե-
րի համար և իւր քաջութեամբ և առաքինութեամբ
առաջինը եղաւ հայ նախարարների մէջ:

Ս. Վարդանի ժամանակ Պարսկաստանում թագա-
ւորում էր Յազկերտը: Սա իւր մոգերի, մոգակեների և
Միհրներսէհ հազարապետի խորհրդով կամեցաւ կրակա-
պաշտութիւն տարածել իւր հպատակ բոլոր քրիստոնեա-

ների մէջ, որոնց թւում, նաև հայերի մէջ, և այս պատճառով ամեն հնարք գործ էր դնում ալդ նպատակին հասնելու համար:



Այդ ժամանակները Պարսից և Հնաց մէջ պատերազմ կար, մոգերը Յազկերտին խորհուրդ տուին, որ Հայոց իշխաններին և նախարարներին իրանց զօրքով օգնութեան հրաւիրէ և յաղթութիւնից լետոյ ստիպէ նոցա, որ արեգակին երկրպագութիւն տան: Ուստի Յազկերտը 443 թուին հրովարտակ ուզարկեց իւր հաւատակ քրիստոնեաններին, այն է Հայերն, Վ.րացիներին, Աղուաններին և ուրիշ ազգերին, որ շտապեն օգնութիւն գալ: Եւ որպէս զի Հայերը ոչինչ չը կասկածեն՝ Վ.ասակ նախարարին մարզպանութիւն տուեց, իսկ Վ.արդանին ընդհանուր սպարապետ կարգեց Հայոց աշխարհին:

Այդ պատերազմի ընթացքում Յազկերտը շարունակ մտածում էր որսալ քրիստոնեալ նախարարներին, իշխաններին և բոլոր մեծամեծներին, երբեմն սիրով, երբեմն սպառնալիքներով և երբեմն արհամարհելով քրիստոնէութիւնը և կրակապաշտութիւնը գովելով. քրիստոնեաները՝ ի հարկէ զայրանում էին նորա դէմ, բայց ոչինչ չէին կարողանում ասել: Երբ Յազկերտը Հնաց յաղթեց, հրամայեց որ այնուշետե բռնութեամբ տարածեն կրակապաշտութիւնը և վերջ տան քրիստոնէութեան. իսկ ովքեր որ կը համարձակէին ընդդիմանալ՝ բանտարկել և մահուան պատիթ տալ և նոցա ունեցած-չունեցածը արքունի սեպհականութիւն դարձնել:

Սակայն Յազկերտը այս միջոցներով չը կարողացաւ հասնել իւր նպատակին, որովհետեւ Յիսուսի անուան հաւատացողները աւելի լաւ էին համարում ամեն տեսակ պատիժներ կրել, քան թէ սուրբ Աւետարանի մի խօսքը եղծել: Յետոյ նա ուզարկեց Հայոց աշխարհը իւր հաւատարիմ ծառաններից մէկին, որի անունը Դենշապուհ էր, որ զանազան խստութիւններով սկսաւ նեղել ժողովրդին, որպէս զի գուցէ այդպիսով ստիպուեն իրանց կրօնը ընդունել. սակայն այդպիսով էլ Հասաւ իւր նպատակին:

2. Երբ որ Յազկերտը տեսաւ, որ այս ամենը անելով չէ կարողանում Հայերին յաղթել, իբրև վերջին զէնք իւր չար մտադրութիւնը իրագործելու՝ հրամայեց մոգերին և մոգակետներին, որ պարսից կրօնի օրէնքները առանձին հրովարտակով յալտնեն հայերին: Այս թղթի

մէջ պատուիրում էր որ կամ պատասխանեն իւր գրած-ներին և կամ շուտով ներկալանան իրան:

Հալոց Յովսէփ կաթուղիկոսը՝ եպիսկոպոսների և հշանների հետ ժողով կազմելով Սրտաշատ քաղաքում՝ մի առ մի հերքեց պարսից կրօնի օրէնքները, մէջը յայտնելով, որ պատրաստ են իրանց կրօնի համար ամեն տեսակ տանջանք, նեղութիւն և մահ յանձն առնել: Երբ այս պատասխանը կարդացին Յազկերտի առաջ՝ շատերը ժածուկ գովում էին և զարմանում էին Հայերի համար-ձակութեան վերայ: Իոկ թագաւորը սաստիկ զայրացած՝ Հալոց մեծամեծներին և նախարարներին կանչեց արքունի դուռը:

Զատկի աւագ շաբաթ օրը 450 թուին նոքա հա-սան Պարսից թագաւորի դուռը և ներկայացան թագա-ւորին, որը տեսնելով թէ նոքա չեն ուրանում իրանց հաւատը, շատ բարկացաւ և երեք չորս անգամ կրկնում էր և ասում.

«Ձեզ ամենքիդ էլ, որ այստեղ էք, չարացար կա-պանքներով դժուարանցանելի տեղերով կաքսորեմ Սա-գաստան, այնպէս որ ձեզանից շատերը ճանապարհին շոգից կը մեռնեն, մնացածներն էլ կընկնեն ամուր բերդերի ու անել բանտերի մէջ. ձեր աշխարհն էլ անթիւ զօրք կուղար-կեմ փղերի հետ, ձեր կանանցն ու որդւոց աքսորել կը տամ Խուժաստան, եկեղեցիները, որ վկայարան էք անուանում, կը քանդեմ, կը փլցնեմ ու կ'ոչնչացնեմ. և եթէ մէկը կըն-դիմանայ՝ գաղանների կոխան լինելով անողորմ կը մեռնի»:

Թագաւորը հրամայեց խիստ հսկողութեան տակ պահել նոցա:

Յինչդեռ նախարարները տարակուսութեան մէջ էին՝ թագաւորի ծառաներից մէկը, որ ծածուկ քըիս-տոնեալ էր, խորհուրդ տուեց նոցա, որ երեսանց կա-տարեն թագաւորի պատուէրը և այդպիսով թէ իրանց և թէ հայրենիքը նեղութիւններից ազատեն: Այս խորհուրդը ընդունեցին ամենքը և միաբան ձեռքերը զրին ս. Սւետարանի վերալ և երդուեցին առ ժամանակ ուրացած ձևանալ հայրենիքը և հաւատի փրկութեան համար: Թագաւորը երբ լսեց նախարարների այս վճիռը՝ շատ ուրախացաւ և մեծ պարզեներով ու բազմաթիւ զօրքերի և եօթն հարիւրի չափ մոգերի հետ յետ դարձրեց նոցա Հայաստան, պատուիրելով, որ շուտով վերջացնեն քըիստոնէութիւնը և կրակապաշտութիւնը հաստատեն: Երբ այս լուրը հասաւ Հայաստան, տակն ու վրայ եղաւ ամբողջ աշխարհը. Հայերը յանդիմանեցին նախա-րարների հաւատուրացութիւնը. ալդ միջոցին բանակի մէջ եղած քահանաները դեսպան ուղարկեցին եպիսկո-պոսների ժողովին և յալտնեցին ամեն բան: Իոկոյն ա-մեն կողմերից բազմաթիւ կամաւոր զօրքեր հաւաքուեցան վաթսուն հազարի չափ, Քրիստոսի սուրբ հաւատը պաշտպանելու համար: Ուխտեցին որ եղբայրը եղբօր, հայրը որդուն, որդին հօրը, կինը ամուսնուն և ծառան տիրոջը չը խնալի և Աստուծոյ օրէնքը թագաւորէ ա-մենի սրտում: Այս ուխտը հաստաելուց յեաոլ ամենքը զինուած պատրաստ էին, երբ պարսից և առ երեսս ուրացած Հալոց խուժը մօգերի հետ հասաւ Ծաղկուն գաւառի Անգղ գիւղաքաղաքը և այնտեղ բանակ դրին. և երբ մոգպեաթ ուզում էր եկեղեցու դռները քանդել՝ ժողովուրդը Դեռնդ երէցի առաջնորդութեամբ յարձա-

կունցան մոդերի ու մոգպետների վերալ և ջարդ տալով
փախցրին նոցա:

4. Մոգպետը տեսնելով Հայոց հաւատի հաստա-
տութիւնը՝ համոզուեցաւ որ անհնար է մոգութիւնը
տարածել նոցա մէջ, խորհրդակցեց Վասակի հետ, որի
խորհրդով և զանազան խորամանկ միջոցներով կրակա-
պաշտութիւնը սկսաւ բռն դնել մի քանի տեղերում։
Վասակը դադանի մոգական կրօնն էր պաշտում, իսկ
լայտնի խաբում էր Հայերին, նա Յազկերտից աւելի իւր
չար խորհրդակիցներով մեծ վնաս հասցրեց Հայաստա-
նին։

Երբ Վարդան Մամիկոնեանը տեսաւ Վասակի ուրա-
ցութիւնը՝ Ազգի մեծամեծների հետ ժողով կազմեց
Եահապիվան քաղաքում, ուր բոլորն էլ միաբերան ուխ-
տեցին հաւատարիմ մնալ Քրիստոսի հաւատին և ձեռքերը
ոռոր Աւետարանի վերալ դնելով և համբուրելով Այն,
որոշեցին պատերազմել հաւատի համար։

Մի քանի ժամանակից լետոյ Յազկերտը Միհրներսէհ
հազարամետին մեծ զօրքով և բազմաթիւ փղերի հետ
ուզարկեց Հայաստան։

Զատկի տօնի օրերին Հայերը լսեցին Պարսից այս
պատրաստութիւնները և ամենքին սարսափը տիրեց. ա-
ռանց ժամանակ կարցնելու իսկոյն բոլոր նախարարները
վաթսուն և վեց հազար զօրքերով հաւաքուեցան Արտա-
շատ. և որովհետեւ թշնամիները բանակ էին դրել Արտազ-
դաւառի Աւարալը դաշտի մէջ Տղմուտ գետի տիրին, ալդ
պատճառով Հայոց զօրախումբն էլ բանակեցաւ այնտեղ։

Վարդանը զօրքը կարգի դնելուց յետով՝ խրախուսեց
և քաջալերեց նախարարներին և զօրքերին. որից յետոյ
պատերազմի նախընթաց երեկոյին Դեռնդ երէցը մի ազ-
դու ճառով զինեց ամենքին աներկիւղ պատերազմելու.
ալդ գիշերը նոքա, ովքեր մկրտուած չէին՝ մկրտուեցան.
սեղան կազմուեցաւ, կատարուեցաւ ո. Պատարագի խոր-
հուրդը և Հոգեգալստեան եօթներորդ օրը ամենքը հա-
զորդուեցան և ալդպիսով պատրաստուեցան հաւատի
պատերազմին։

5. 451 թուին լունիսի 2-ին սկսուեցաւ պատերազմը.
յաղթութիւնը Հայոց կողմն էր. քաջ Վարդանը առիւծի
նման աջ ու ձախ գլորում էր պարսիկներին. բայց լան-
կարծ մի քանի հարուած ստանալով նահատակուեցաւ և
երեկոյեան դէմ վերջացաւ պատերազմը։ Հայերի կողմից
ընկան 1036 հոգի, իսկ Պարսից կողմից ընկան 3544
հոգի։

Վարդանանց քաջ նահատակների գլխաւորներն էին,
քաջ Վարդանը, կորովի Խորէնը, արի Արտակը, զարմա-
նալի Տաճատը, իմաստուն Հմայեակը, հրազդակերտ Ներսե-
հը, մանուկ Վահանը, արդար Արսէնը, և լառաջադէմ
Դարեգինը։

Պատերազմից յետով Հայերը ամրացան բերդերը. թէ-
պէտ պարսիկների կողմից էլի փորձեր եղան Հայերի մէջ
կրակապաշտութիւն տարածելու, բայց անօգուտ անցան.
վերջ ՚ի վերջոյ Հայերը ազատութեամբ սկսան պաշել
իրանց կրօնը։

Վասակը էւր գործած չարութիւնների պատիժը ստացաւ. նորան մատնեցին զանազան պատիժների և վերջապէս բանտում որդնալից մեռաւ:

Սուրբ Վարդանանց տօնը Հայոց եկեղեցին
կատարում է միշտ բուն բարեկենդանի հինգշաբթի օրը:

283

00263x2

283

2013



RR
685